ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«05» 01 2021թ. Թիվ 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 132-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 132-Լ հրամանում լրացնել 11.3-ին հավելված՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի

գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
2024 թվականի հունվարի 8-ի
N02 -Լ հրամանի
«Հավելված N 11.3
Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահի
2021 թվականի հոկտեմբերի 15-ի
N 132 -Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության (այսուհետ՝ Բաժին) Կոմիտեի կենտրոնական մարմնի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, սույն կանոնադրության և իրավական այլ ակտերի հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Բաժնի հիմնական նպատակն է Կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության (այսուհետ՝ Վարչություն) փաստաթղթաշրջանառության իրականացումը:

4. Բաժնի խնդիրն է Վարչության փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը, ինչպես նաև Վարչության գործավարության միասնական կարգի պահանջների պահպանման ապահովումը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժինն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Վարչությունում ստացվող փաստաթղթերի, առերևույթ հանցանքի մասին հաղորդումների, քրեական վարույթների գրանցման, հաշվառման, աշխատանքների իրականացնում.

2) քրեական վարույթների թվայնացման աշխատանքների իրականացում.

3) կապի օպերատորներին ուղարկվող և նրանցից ստացվող փաստաթղթերի հաշվառման իրականացում՝ ըստ կապի օպերատորների.

4) Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալների, Կոմիտեի գլխավոր քարտուղարի իրավական ակտերի ծանուցման աշխատանքների իրականացնում.

5) սահմանված կարգով փաստաթղթերի Կոմիտեի արխիվի բաժին հանձնման աշխատանքների իրականացում.

6) Վարչությունում վարվող մատյանների հաշվառման աշխատանքների իրականացնում.

7) Վարչությունում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացման աշխատանքների, գործավարության միասնական կարգի կիրառման և դրա պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում.

8) Վարչությանն ուղղված (մտից) և Վարչությունից առաքվող (ելից) փաստաթղթերի ընդունման, ստուգման, առաքման, ըստ ենթակայության դասակարգման, հաշվառման, ձևակերպման և պատճենահանման աշխատանքների իրականացում.

9) դիմում-բողոքների ընդունման, ստուգման, գրանցման և ըստ հասցեատերերի հանձնման աշխատանքների իրականացում.

10) քաղաքացիների ընդունելության աշխատանքների կազմակերպում.

11) քրեական վարույթների վերաբերյալ հաշվետվությունների կազմման գործընթացին աջակցության ցուցաբերում:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Բաժնի գործունեությունը համակարգում է Վարչության պետը:

7. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

8. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Վարչության պետին, ինչպես նաև Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

9. Բաժնի պետը պատասխանատու է բաժնի առջև դրված խնդիրների և վերապահված գործառույթների իրականացման համար:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Բաժնի կառուցվածքում ներքին կառուցվածքային միավորներ ընդգրկված չեն: